Գուրգեն Մահարի

Սեւ մարդը

5

Ռուսական Գ տառի նման կանգնած փայտե հարմարանքից կախված երկաթե սալիկի վրա երեք անգամ զրնգաց հերթապահ ավագի երկաթե գավազանիկը: Այդ աշխատանքի ազդանշանն է: Բարաքներից դուրս են գալիս ճամբարի բնակիչները տաք հագնված, գոլորշի արտաշնչելով, բրիգադ առ բրիգադ կանգնում են մեծ ճանապարհի վրա, դեռ փակ դարպասների դեմ, կանգնում են հնգյակներով, բրիգադիրների և վերակարգիչի հսկողության տակ:

Մոտենում է վերակարգիչ Սիդորովը Աշոտ դայուն .

— Քո աշխատանքի հերոսը հրաժարվեց աշխատանքի դուրս գալուց:

Աշոտ դային ժպտում է . ես գիտեմ, թե ինչ է նշանակում այդ ժպիտը, — ես այդպես էլ գիտեի . . .

Բացվում են դարպասները . դրսում կանգնած են ճամբարի պետը, կոմենդանտը, գլխավոր բժիշկը՝ սև ակնոցներով ու սպիտակ բժշկական համազգեստը ծածկած մուշտակով, նրանից քիչ հեռու պահակախումբն է . նրանք ուղեկցում են աշխատանքային բրիգադներին: Հինգ առ հինգ դուրս են գալիս բրիգադները և գնում զանազան ուղղությամբ, դեպի իրենց աշխատանքային կետերը: Վերջում դուրս ենք գալիս մենք՝ «գործարար բակի» արհեստավորական՝ ատաղձագործների, կոշկակարների, աղյուսագործների, տակառագործների բրիգադները: Դերձակներին միանում են մի քանի դերձակուհիներ, որոնց մեջ

աչքի է ընկնում մոլդավուհի Սև Լյալայն, սև, վառվող աչքերով, սև, գռուզ մազերը տաք, ականջավոր գլխարկի մեջ սեղմած Սև Լյալյան, ատամներն սպիտակ և միշտ ժպտուն Լյալյան, որի մասին ասում են, որ նա բացել է գողերի մի խմբակի չարագործությունները: Նա դեռ կրում է իր տնային տաք վերարկուն, որը կարծես ծածկված է սև ձկնկիթի փայլուն շերտով:

Ինչ վերաբերում է բրուտանոցին, ապա մենք երեք հոգի ենք՝ Աշոտ դային, վարպետը, աբասթումանցի կառապան Մամոն և ես: Ես ցեխ եմ պատրաստում, վարպետը՝ ամաններ, իսկ Մամոն օգնում է և՛ վարպետին, և՛ ինձ: Վաղուց Աշոտ դային մտածում է Մամոյին հիմնավորապես նստեցնել «անիվի» վրա, իսկ ինձ համար բերել մի օգնական: Այդ մարդը Սանասարը պիտի լիներ, Տայշետից եկած «աշխատանքի հերոսը», Սանասարը, որի համար բրուտանոցն այն է, ինչ օդաչուի համար կառք քշելը երևի:

— Մարդն է՞լ ցեխի հետ գործ բռնի . . .

Խա՛րթ-խո՛ւրթ, խա՛րթ-խո՛ւրթ, — «գործարար բակի» ջոկատը քայլում է ձյունոտ դաշտերով: Մենք անցնում ենք հրշեջային աշտարակի մոտով: Աշտարակի վրա կանգնած է հրշեջ պահակը:

— Քեռի՛, է՛յ, քեռի, մի լավ նայի, ամնիստիան չի՞ երևում, — լսվում է հանդուգն Սև Լյալյայի ձայնը, և բոլորը զվարթ ծիծաղում են:

— Իսկ ինչո՞ւ են այդ աղջկան դատապարտել, — հարցնում եմ ես Աշոտ դայուն, — չէ՞ որ նա հայտնաբերել է գողերին:

— Նա սիրելիս է եղել գողերի ատամանին, — պատմում է Աշոտ դային, — ուզեցել է ընտանիք կազմել և նրան փրկել վերահաս կորստից . այս նպատակով էլ նա ներկայանում է օրգաններին, խոստանում է հանձնել հանցագործներին, պայմանով, որ ատամանին ազատեն: Խոստանում են, բոլորին ձերբակալում և դատում, իրեն էլ հետը:

— Մեղադրանքը՞, — հարցնում եմ ես:

— Գողերին գողության, իսկ Լյալյային նրանց հետ կապ ունենալու և երկար ժամանակ թաքցնելու, չհայտնելու համար:

Ամբողջ պատմությունը:

Ահա և «գործարար բակը», որը ոչ մի նմանություն չունի ոչ մի բակի հետ: Մոտ վեց հեկտարանոց բաց տարածություն է դա, որի վրա տեղավորված են արհեստանոցներ, պահեստներ, գրասենյակներ, աղյուսի չորանոցներ: Արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային կողմերում կանգնած են հսկիչ աշտարակներ: Աշտարակների վրա պահակները ձանձրանում են, — փախուստի ոչ մի դեպք: Մի անգամ միայն տագնապ եղավ մեծ և անասելի . այդ գարնանն էր:

Երբ «գործարար բակի» ողջ ամբնակազմը երեկոյան հնգյակներով կանգնեց ճամբար վերադառնալու համար, ստուգման ժամանակ պարզվեց, որ չկա Վենիամին Զակինը, որի պաշտոնը խոհանոցում գետնախնձոր մաքրելն էր: Իսկույն ականջից ականջ հայտնի եղավ, որ շատերը կասկածում էին, թե նա այն չէ, ինչ ցույց էր տալիս իրեն, որ անաշխատունակ, քամուց օրորվող, շատակեր, քնկոտ Զակինի դիմակի տակ «գործարար բակի» խոհանոցում կոճղի վրա նստած գետնախնձոր է մաքրում իսրայելացի ընդհատակյա մի հերոս, որ կարողացավ պահականու քթի տակով սլանալ դեպի ազատություն, որտեղ նրան սպասում են մեծ առաքելություններ և մեծագործություններ: Ծույլ, հույլ, թույլ Զակինը մի ակնթարթում սրբապատկերի նման հարմար կերպով տեղավորվեց ոսկեզօծ շրջանակների մեջ և անմահաբար հերոսացավ և հերոսաբար սրբացավ: Ահավո՜ր Զակին . . .

Այո՛, պահականին իրար անցավ: Նրանք մի բան արած լինելու համար վազեցին զանազան ոռոգությամբ, մտան ցեխերը, մինչև անգամ գրասենյակը և ահա զարմանալին . աղյուսի գործարանի կողմերից երևաց նորին իսրայելական մեծության Վենիամին Աբրամովիչ Զակինը, արհեստական, զսպանակավոր մարդու նման քայլերը փոխելով, ուսից կախված անբաժան, Ռամզես արքայի ժամանակներից մնացած տոպրակով: Շուտով հայտնի դարձավ, որ նա ճաշից հետո իր քայլեն ուղղել է դեպի աղյուսի գործարանը՝ ճաշից հետո և ընթրիքից առաջ լրացուցիչ կերպով մի թեթև կազդուրվելու համար: Այս նպատակով նա

վերցնում է մի քանի ընտրովի գետնախնձոր և հանձնում է իրեն բարեհաջող քամուն, որը բարեբախտաբար փչում էր դեպի աղյուսի գործարանը: Այդտեղ նա գտնում է հանգած, բայց դեռ տաք մի քուրա, գետնախնձորը թաղում տաք մոխիրների մեջ և թրծարանից առավոտյան հանած դեռ ջերմ աղյուսների վրա պառկում է և ննջում փարավոնական, բարձր մակարդակի նինջով:

Ամբողջ պատմությունը:

Երբ ոսկե շրջանակներից դուրս ընկած և պսակազերծված հերոսը երկու պահակների ուղեկցությամբ որոշակի կերպով մոտեցավ, բարձրացավ մի ընդհանուր ծիծաղ: Իր ծիծաղը չկարողացավ զսպել մինչև անգամ գերմանացի հյուսն Դոմինիկ Կարլովիչ Ֆեֆերը, որը բուն հեղինակն էր Զակինի նոր վերաորակավորման ու նենգափոխման . . .

Այդպես պատահեց:

. . . Բրուտանո՛ց, անմոռանալի բրուտանոց: Ես վառում եմ վառարանը . այս անհրաժեշտ է ոչ միայն տաքանալու, այլև ջուր տաքացնելու՝ ցեխ պատրաստելու համար: Վառարանը զվարթ աղմկում է: Մամոյի հետ բաց, տախտակե պատգարակով կրում ենք շագանակագույն հողը և լցնում տաշտակը: Մամոյի տրամադրությունն այսօր բարձր է, նա չի հայհոյում ինձ ոչ միայն Աշոտ դայու ներկայությամբ, այլև բացակայությամբ: Կարճահասակ է Մամոն, մոտ քառասունհինգ տարեկան, արագաշարժ և հնարագետ, երբ քաղցած է՝ անսահման չար, երբ կուշտ է՝ չափավոր բարի, գլուխը երկարավուն, քիթը կեռ, բարակ շրթունքները բեղերի փակագծերով ամփոփված, Մամոն, աբասթումանցի ազատ կառապան Մամոն, որն անգամ մի քիչ հայերեն գիտի և նույնքան ռուսերեն:

Ցեխը պատրաստ է: Աշոտ դային և Մամոն նստում են իրենց չարխերի վրա: Պտտվում է անիվը, Աշոտ դային վերցնում է մի կտոր ցեխ, դնում է չարխին, մատներով օգնում, ձև է տալիս անշունչ կավին և ահա հողե նույնքան անշունչ ամանը պատրաստ է: Իզուր չէ, որ Աշոտ դային մեծ հեղինակություն ունի ճամբարում, մի ժամում մի քանի տասնյակ ամաններ կողք-կողքի շարելը նրա համար խաղ ու պար է, պատվո տախտակից նրա անունը չի իջնում, և նա

մրցակից չունի: Նա պատրաստում է նաև սափոր, մոխրաման, ծաղկաման: Պետերը, պահակները նրան «մաստեր» են անվանում, Մամոն՝ «ուստա»:

Ով՝ ով, Մամոն իրավունք ունի Աշոտ դայուն «ուստա» անվանելու, որովհետև ամբողջ օրվա ընթացքում հազիվհազ արյուն, ո՛չ, քրտինք թափելով, անհայտ «սվոլիչ»-ներին հայհոյելով, մատներին չենթարկվող կավը տաշտում շրփացնելով կարողանում է միայն տասը-տասներկու աման պատրաստել, որոնք վարպետի պատրաստած ամաններից տարբերվում են այնպես, ինչպես ագռավները աղավնիներից:

— Սվոլիչ, ցեխն էլ ցեխ չի՛, չի՛ հասել, — գոռում է նա, իսկ ես գիտեմ, որ «սվոլիչը» ոչ այնքան ցեխին է վերաբերում, որքան ինձ: Աշոտ դային բարձրանում է տեղից, տաշտից վերցնում է Մամոյի շպրտած ցեխի գունդը, դնում է իր չարխին, և բարեձև ամանը պատրաստ է: Խեղճացած Մամոն ուզում է մի բան ասել, բայց այդ պահին լսվում է ճաշի ազդանշանը: Մամոն արագ վեր է թռչում տեղից, լվանում է ձեռքերը, վերցնում փոքրիկ դույլը և վազում խոհանոց ճաշ բերելու:

Բայց այդ միջոցին դուռը բացվում է և ներս է մտնում ոչ ավելի ոչ պակաս, քան մոլդավուհի Սև Լյալյան: Կասկած չկա, որ եթե Մամոն այստեղ լիներ, վեր պիտի թռչեր տեղից, երկու ձեռքով մերկացներ գլուխը և աջ ձեռքի հինգ մատով ճակատի աջակողմը ծածկելով, ամբողջ ձայնով գոռար . — «վնիմանի՛», — ինչպես անում է նա, երբ բրուտանոցում երևում է որևէ ազատանի . — «դատարկ գլխով պատվի չեն առնում», — կասեր «գործարար բակի» պետը, իսկ Մամառն կժպտար ամբողջ դեմքով, առանց աչքերը կտրելու պետից:

— Ուշադրությո՛ւն, — զվարթ ձայնով կանչեց Լյալյան, — սեփական ոտներով բրուտանոց ժամանեց Սև Լյալյան, ստուգելու համար բրուտանոցի պլանները . . .

— Մեզ մոտ ամեն ինչ կարգին է, — «զեկուցեց» Աշոտ դային, — գործերը գնում են, գրասենյակը գրում է:

— Իսկ իմ գործերը վատ են, — լրջացավ աղջիկը — նախ՝ ասեղով մատս ծակեցի և ամենասարսափելին՝ ճաշի ամանս կոտրվեց .

Զարդվեց բաժակս, թափվեց գինին,
Իմ վերջը ի՞նչ պիտի լինի, —

Երգեց նա և շարունակեց . — Ես գիտեմ, պիտի ասես՝ պահեստ գնա, պատասխանում եմ, — պահեստապետին չեմ սիրում, նախ՝ ֆսֆսում է, երկրորդ՝ նայում է ագռավի աչքերով այնպես, որ ինձ թվում է, թե ես մի կտոր պանիր եմ: Իսկ ես պանիր չեմ, իսկ եթե պանիր եմ, նրա համար չեմ, թող իմանա . . . Այն էլ ասեմ, որ ես դիտմամբ ջարդեցի ամանս, որ գամ ձեզ հետ ծանոթանամ: Իսկ եթե ճիշտը կուզեք . . . նա ժպտաց ու երգեց .

Դու արևի երկիր, դու խաղողի երկիր,
Սիրուն Մոլդավիա . . .

— Իսկ եթե ճիշտ կուզեք, ոչ մի ման էլ չի ջարդվել . մի պատրվակ պե՞տք էր ճարել, թե ոչ: Ես կարող էի գալ և ասել, — քեռիներ, ո՞ւմ կոճակն է ընկել, տվեք կարեմ . դուք գլխի կընկնեիք, որ հնարած գործ է, իսկ ման խնդրելը . . . ո՞վ կարող է մտքով անցկացնել, որ ուրիշ մտքով եմ եկել, ոչ ոք:

Աշոտ դային ծիծաղում է իրեն հատուկ անձայն ծիծաղով, իսկ այդ ժամանակ ներս է մտնում Մամոն դույլը ձեռքին: Նա հանկարծակիի է գալիս, բայց անմիջապես կողմնորոշվում է, ժպտում ամբողջ դեմքով և բարևում է .

— Վնիմանի — զդրաստի . . . ուստա, — դիմում է նա հետո Աշոտ դայուն, — հինգ բաժին տվեց խոհարարը, մի մոխրաման խնդրեց:

— Ո՞ւմ հաշվից տվեց, — հարցնում է Աշոտ դային կարծես ինքն իրեն:

— Զրկիր Վանյայի հաշվին, այ ուստա, «բեզ վադի, նի սուդի-տուդի», — փայլեց իր ռուսերենով Մամոն՝ յոթերորդ երկնքից:

— Ապրում եք ոնց որ պրովոկատոր, երեք հոգուն այսքան ճա՞շ, — ասում է աղջիկը՝ ձեռքը խփելով երեսին:

— Նստիր միասին ճաշենք, Լյալյա, — ասում է Աշոտ դային, — եղիր այսօր մեր հյուրը:

— Կարծում եք կմերժե՞մ, — հարցնում է նա՝ Աշոտ դայուց վերցնելով նրա աշխատանքային գոգնոցը և կախելով սյունից, — վաղուց տղամարդկանց հետ չեմ ճաշել:

Նա հանում է իր վերարկուն և կախում մյուս սյունից: Այսպիսի շոայլություն Աշոտ դայու կողմից Մամոն ուրիշ դեպքում կընդուներ որպես երկնքից ընկած կրակ ու պատիժ, բայց ահա նա ժպտում է . քնքշությամբ շոյում սեփական բեղերը, երկար նստարանը քաշում է վառարանի մոտ, շորով մաքրում փոշին և ձեռքի ափով խփում է նստարանին:

— Պաժալուստա՛ . . .

Ապա թե Աշոտ դային լվացվում է, սրբում ձեռները, մտնում է բրուտանոցի երկրորդ, պատրաստ ամանեղենի բաժինը և դուրս է գալիս մի նոփ-նոր աման ձեռքին: Մամոն խլում է ամանը, եռացրած ջրով հիմնավորապես լվանում, հոտ քաշում, նորից լվանում, հետո բաժանում ճաշը և ուրախ կոլեկտիվն անցնում է գործի: Սովորաբար Մամոն ուտում է չփչփացնելով և դրա համար նա մի անգամ չէ, որ ստացել է նկատողություն Աշոտ դայուց, իսկ այսօր նա ուտում է անձայն ու հանդիսավոր:

— Քեռի, — ասում է Լյալյան ճաշի ժամանակ, — մի բան էլ պիտի խնդրեմ, — թուղթ և մատիտ . . .

— Երեկոյան, — ասում է վարպետը, — գնանք տուն, կստանաս:

— Տո՞ւն, — հարցնում է աղջիկը:

— Տո՛ւն, — ձգում է Մամոն:

— Տուն, — ասում եմ ես մտքումս, և չգիտես ինչու՝ բոլորս էլ տխրում ենք:

Հնչում է ազդանշանը: Այդ նշանակում է ճաշի դադարը վերջացավ: Աղջիկը վեր է թռչում տեղից:

— Շնորհակալություն հյուրասիրության համար, վաղուց այսպիսի ախորժակով չէի ճաշել . . . Իսկ եթե ինձ այստեղ տեսնեն, մեկուսարան չե՞ն քշի . . . Չեն համարձակվի: Ես գիտեմ, ո՛ւր եմ եկել:

Բոլորս ոտքի ենք կանգնում: Աշոտ դային հագցնում է վերարկուն: Նա նայում է բոլորիս և ժպտում է իր սպիտակ ատամներով և երգում .

Կակաչների երկիր, վարդերի երկիր,
Սիրո՛ւն Մոլդավիա . . .

— Գնացի, առանց ինձ չտխրեք: Երեկոյան տանը կտեսնվենք:

Նայեց սառցապատ ապակիներին և կարծես ինքն իրեն կրկնեց .

— Երեկոյա՛ն . . . տանը . . .

Նա արագ բարձրացրեց գլուխը կարծես ինչ-որ մտքից ազատվելու համար, գրեթե վազեց մինչև դուռը, երկու ձեռքով հրեց այն, առանց ետ նայելու բարձրացրեց ձեռքը, շարժեց մատներն իբրև հրաժեշտի նշան, ու դուռը ծածկվեց նրա ետևից:

Լռություն:

Ես նայեցի այն սյունին, որից քիչ առաջ կախված էր Լյալյայի վերարկուն: Սյունը մերկ էր ու գեղեցիկ, ինչպես գեղեցիկ է նշենին տերևաթափից հետո: Ես նկատեցի և այն, որ Աշոտ դայու ու Մամոյի հայացքը նույնպես թափառում է նույն

սյունի ուղղությամբ:

Կակաչների երկիր, վարդերի երկիր,
Սիրուն Մոլդավիա . . .